Լեոնիդ Ենգիբարյան

Չէ ու հա

Ես անդունդի եզրին եմ՝ «Ոչ»-ի ու «Այո»-ի արանքում: Քո Ոչ-ից ես իմ Այո-ին եմ հասնում ցանկությունից, ամաչկոտությունից ու սիրուց հյուսված պարանով: Այն ցնցվում է, ճոճվում, ու ինձ վրա կախված է Միայնությունը եւ Այո-ն, որ այնքան գրավիչ ու մոտ էր թվում, հիմա անհասանելի է:

Բայց ես քայլում եմ, Հպարտությունը պահում է հավասարակշռությունս:

Նաեւ հին ու բարի Հույսի վալսը, որ հնչում է բարդ համարների կատարման ժամանակ, ինձ ուժ է տալիս:

Ես գալիս եմ . փորձելով չնայել ներքեւ, ու չմտածել, որ հանկարծ, մինչ ես գալիս եմ դեպի քո Հա-ն ինչ-որ մեկը արդեն հասել է քեզ, օգտագործելով Բարեկեցության աստիճանը:

Ինձ գնալով ավելի ու ավելի բարդ է . ճոճում է հուսահատության քամին, ու երբ այդ ճոճքը անտանելի է դառնում, դու անսպասելի գալիս ես ինձ ընդառաջ:

Ես զցում եմ ծանր ձողը, դու գրկում ես ինձ, ու մենք ընկնում, կամ էլ թռչում ենք՝ ինչ տարբերություն, պայծառ աստղերից մեկի վրա, որ օսոստոսյան գիշերների անսահմանությունում սպասում են մեզ վառված:

—Սիրելիս, — ասում ես շոյելով մազերս, — ինչպե՞ս կարելի էր այդպես ռիսկի դիմել: Դու կարող էիր սայթաքե սարսափելի Միայնության մեջ: Հիմարիկ, ինչի՞ համար էր այդ ամենը:

— Բայց դու ինքդ սկզբում ասացիր Չէ, ու ես ստիպված եղա ռիսկի դիմել:

— Մի՞թե ասել եմ, — զարմացար դու, — ինչ-որ չեմ հիշում:

թ.՝ Ս. Պետրոսյան